

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 2-90.01.02 «ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԿԱՐԱԳԻՐԸ**

| | |
|--|---|
| Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը | «Երգիչ- կատարող» |
| I. Դերը | Երգիչ-կատարողը հանդես է գալիս ինչպես մենակատարումներով այնպես էլ խմբերգային-համույթային ելույթներով , կազմակերպում եւ իրականացնում է համերգային ծրագրեր: |
| II. Խնդիրների բնագավառները | |
| Խնդիրների բնագավառ 1. Նախապատրաստական աշխատանքների կատարում | |
| Աշխատանքային գործընթացը | <ol style="list-style-type: none"> 1. Ընտրում է ստեղծագործության ժանրը ըստ կատարողական հնարավորությունների: 2. Մանրամասն ուսումնասիրում է երաժշտական ստեղծագործությունը: 3. Ընկալում է մեղեդային և բանաստեղծական տեքստը: 4. Հարմարեցնում է ստեղծագործությունը իր ձայնաձավալին: |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) Կարողանում է ճաշակով եւ հետաքրքիր ծրագրեր կառուցել ըստ ստեղծագործությունների դարաշրջանի, ժանրի և ոճի: Գրագետ վերլուծում է ստեղծագործության կառուցվածքը: 2) Ճիշտ է մեկնաբանում ստեղծագործության գեղարվեստական և կերպարային նրբությունները ինչպես նաև տեխնիկական տարրերը: 3) Կարողանում է գրագետ փոխանցել տեքստի իմաստը մեղեդու միջոցով, ինչի շնորհիվ ստեղծում է ստեղծագործության կերպարային ամբողջականություն: 4) Կարողանում է օգտագործել ամբողջ ձայնաձավալը տիրապետելով ճիշտ ձայնատարությանը: Նաև տիրապետում է արտիկուլյացիոն ապարատին / դիկցիա/ և ճիշտ երգեցիկ շնչառությանը: |
| Խնդիրների բնագավառ 2. Համատեղ աշխատանք նվագակցողի հետ | |
| Աշխատանքային գործընթացը | <ol style="list-style-type: none"> 1. Որոշում եւ համաձայնեցնում է երաժշտական ստեղծագործության ոճը, տեմպը, չափը, նրբերանգները / նյուններ/ նվագակցողի հետ: 2. Պարբերաբար ստեղծագործական հանդիպումների միջոցով հասնում է կատարողական հմտության: |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) Կարողանում է նվագակցողի հետ պահպանել անսամբլային կատարման տարրերը /տեմպ, ուղիղ, նրբերանգներ, միասնական շնչառություն/ 2) Ապահովում է անսամբլային կատարման բոլոր պահանջները / երաժշտական ֆրազաների, նրբերանգների, կերպարի լիաճժեք եւ մախնական մեկնաբանություն/ |
| Խնդիրների բնագավառ 3. Կատարողական արվեստ | |
| Աշխատանքային գործընթացը | Պատրաստում է բազմաժանր ծրագրեր, կերպարային ճիշտ |

| | |
|---|---|
| | մեկնաբանությամբ: |
| Կատարման չափանիշներ | Տիրապետում է բեմական վարպետությանը ունենալով՝ բեմական կեցվածք, հմայք և համապատասխան երաժշտական զգացմունքայնություն: |
| Խնդիրների բնագավառ 4. Անսամբլային եւ երգչախմբային երգեցողության կարողություն | |
| Աշխատանքային գործընթացը | <ol style="list-style-type: none"> 1. Յուրացնում է բազմաձայն երաժշտական ստեղծագործության պարտիտուրը: 2. Պարտաճանաչ և ճշգրտությամբ կատարում է խմբավարի պահանջները: |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) Կարողանում է ճիշտ կատարել ստեղծագործության ձայնաբաժնի իր մասը ձուլվելով բազմաձայնության մեջ: 2) Ուշադրությամբ հետևում է խմբավարի ձեռքին, կատարելով նրա բոլոր գեղարվեստական պահանջները: |
| III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/ | <p>Պատասխանատու է իր և ստեղծագործական ղեկավարների առջև երաժշտական ծրագրի պատրաստման և կատարման ճիշտ ժամկետների և որակի ցուցաբերման համար:</p> <p>Պարտավոր է պահպանել և հետևել իր առողջական վիճակին, պարբերաբար այցելել ձայնալարի մասնագետին/ ֆոնիատոր/:</p> |
| IV. Լեզուները | <p>հայերեն-լավ</p> <p>ռուսերեն-լավ</p> <p>անգլերեն-լավ</p> <p>իտալերեն-լավ</p> |
| V. Համակարգիչը | <p>MS Word / լավ /,</p> <p>MS Excel / բավարար /,</p> <p>MS Final / լավ /,</p> <p>Internet /լավ/:</p> |
| VI. Գիտելիքները | <ol style="list-style-type: none"> 1. Պետք ունենա մենակատարի երգացանկ, որը ներառում է հիմնական երաժշտական ժանրերի եւ դարաշրջանների արևմտակրթական և հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ, հայ հոգևոր և ժողովրդական երգեր: 2. Պետք է լիարժեք տիրապետի մասնագիտական տերմինաբանությանը, «երգեցողություն» մասնագիտության բոլոր պահանջվող տարրերին և ունենա հանրակրթական լիարժեք գիտելիքներ: 3. Պետք է իմանա անսամբլում և երգչախմբում աշխատանքի առանձնահատկությունները: 4. Պետք է տիրապետի հիմնական երաժշտական գիտելիքներին / սոլֆեջիո, թեորիա, հարմոնիա/: |
| VII. Կարողությունները և հմտությունները | <ol style="list-style-type: none"> 1. Պետք է կարողանա ազատ կարդալ նոտագրված երաժշտական ստեղծագործությունը, հիմնվելով տարրական երաժշտական գրագիտության գիտելիքների վրա / սոլֆեջիո, թեորիա, հարմոնիա/ : |

| | |
|---|--|
| | <p>2. Պետք է ունենա մասնագիտությանը համապատասխան ծայնային տվյալներ, լսողություն, ռիթմի լավ զգացողություն, վոկալ ինտուիցիա, տիրապետի ճշգրիտ վոկալ շնչառությանը, հավասար ծայնատարությանը, խոսքի պարզ արտաբերմանը:</p> <p>3. Պետք է տիրապետի իր հոգևիճակին երաժշտական ծրագիրը որակյալ մատուցման համար, հմտորեն կերպարանափոխվի ըստ ստեղծագործությունների բովանդակության և վարպետորեն դրսևորվի անսամբլային կատարումների ժամանակ:</p> <p>4. Պետք է տիրապետի որևէ երաժշտական գործիքի, որպեսզի կարողանա ինքնուրույն սովորել երաժշտական ստեղծագործությունը:</p> <p>5. Պետք է ունենա անսամբլային և երգչախմբային երգեցողության երգացանկ տարբեր կամերային կազմերի համար / զուգերգ, վոկալ քառակ, վոկալ յոթնյակ, մեներգեր տարբեր գործիքային կազմերի հետ, տարբեր կազմի և ծավալի երգչախմբեր /:</p> <p>6. Պետք է ունենա վոկալ գեղարվեստական կատարողական հնարավորություններ:</p> <p>7. Պետք է տիրապետի որևէ երաժշտական գործիքի :</p> |
| <p>VIII. Անձի որակական հատկանիշներ</p> | <p>Աշխատասիրություն, պարտաճանաչություն, պարկեշտություն, պատասխանատվություն, կարգապահություն, ճշտապահություն, ինքնապահանջկոտություն, ստեղծագործական կատարելագործման և գաղափարային նորարարության ձգտում, կոլլեգիալ հարաբերությունների ճկունություն, տեղեկացված լինելու ձգտում :</p> |